


2186

July - 1901 Sheep



30 MAY 2011  
24 JAN 2008



Պրոլէտարիական բոլոր եռկանութեածիացեղ!

Ի. ՍՏԵՓԱՆՅՈՎ

# ԺԱՆ-ՊՈԼ ՄԱՐԱՏ

ՆՐԱ ԿՈՒԻՆԸ ՀԱԿԱՑԵԼԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԴԵՄ

9(44)  
4-88

ԳԻՆՆ Է ԵՐԿՈՒ ՐՈՒԲՐԻ

ԹԻՖԼԻՍ  
Տպարան ԱԱՏԵՆԵԱՆԻ, Վօրօնցօվի կամուրջ  
1919 թ.

06.08.2013

2176

9(44)

Ա-88

ԿՐ

## ԺԱՆԴՈԼ ՄԱՐԱՏ

առաջանք և մարդու ազգությունը պահպանի պատճենագիրը  
ուղարկած ամբողջ աշխարհում կայացած է (1743—1793)

Այս ժամանակակից աշխարհում առաջանած է այս պատճենը  
ուղարկած ամբողջ աշխարհում առաջանած է այս պատճենը

Պատմութեան դպրոցական դասագրքերում Մարատը նկարվուում է շատ կարճ՝ արիւնաբու գաղան, որը միշտ պատրաստ է եղել զլիսատելու նրան, ով կասկածելի էր թւում հին արիստօկրատիայի համակրութեան կամ մօտիկութեան մէջ. ինեւ լազար պատւասէր, որը կատաղի ատելութեամբ կախաղան հանեց համարես թէ տասը հազար հակառակորդների. զժողքի ծնունդ, և վերջապէս սպանւած քնքոյց ու ազնիւ Շարօստա Կօրդէի ձեռքով. Մի խօսք, սարսափելի արարած, որով դայեակները, եթէ այնքան նպէտ չը լինէին, շատ վազուց արդէն կը վախիցնէին երեխաներին:

Ասենք արդէն վախիցնում էլ են. Հինգ տարի առաջ, ես բաւական զարմացայ, երբ Հաշտարխանի նահանգում լինցի, թէ ինչպէս անդրագէտ պառաը հայնոյում էր իր թոռանը. «Այդու նողոված Մարատ»: Եւ Մարատը նրա համար նշանակում էր զլիսակեր, աւազակ:

Բուրժուական գիտնական պատմագիրները շատ հեռու չեն գնացել դպրոցական դասագրքերից. Այսպէս, Ի. Տէնը, բուրժուական յայտնի պատմագիրներից մէկը, ապացուցում է Մարատի խելագարութիւնը զանազան միջոցներով. նրանով, որ նրա հայրը սարդինացի է եղել, իսկ մայրը ֆնտից, — միթէ կարող էր այդպիսի ամուսնութիւնից ծնւել կարգին մէկը, — նրանով, որ Մարատը բնագիտութեան մէջ արտայայտել էր. այսպիսի ենթագրութիւններ, որոնք գիտականօրէն հաստատեցին միմիայն յետագյոււմ, — կարծէ է արդեօք հոգեպէս հաւասարակշուութիւն ունեցող մարդը այդպէս հեռու նայել: Եւ հասկանալի է. Տէնը եղրակացնում է, որ Մարատը խելագար, արիւնաբու և արեամբ ժածկած մի երէշ է:

Մրկրորդ Գետական Դումայում ժողովրդական կուսակցու-

И. СТЕПАНОВ-МАРАТ



3820-50

թիւներից մէկի ներկայացուցիչը յիշեց Մարտի մասին։ Բայց յիշեց միայն նրա համար, որպէսզի ասէր, թէ Մարտի չարագործութիւնները վերջապէս յուղեցին ժողովրդին և Շարլոտա Կօրդէի թոյլ ձեռքը հանդիսացաւ ժողովրդական ճշմարիտ վըրդումունքի գործիք։

Ի վերջոյ, մեր օրերում Մարտի մասին յիշեց Ա. Ֆ. Կէրէնսկին։ Յիշեց և՝ իր մարդկայնութեան ու անհամեմատելի դերազանցութեան ամբողջ գիտակցութեամբ՝ ասաց, թէ ինքը երբէք չի լինի ուսուական յեղափոխութեան Մարտը։

Բոլորն էլ հրաժարում են Մարտից, բոլորն էլ ամաչում են նրա հետ համեմատելուց։

Բայց վաղուց արդէն ժամանակ է վերջ տալու այն ստիճան, որ հիւսել է բուրժուական գիտութիւնը Մարտի շուրջը։ Այժմ երբ լրանում է Մարտի մահւան հարիւր քսան և հինգ ամեակը, ժամանակ է ասելու, որ բանւոր դասակարգը ունի բոլոր հիմքերը հաշւելու Մարտին այն մարդկանցից մէկը, որոնք առաջին անգամ Եւրօպայում սկսեցին կանգնել բանւորական շահերի գիտակցման և նրանց գիտակցական պաշտպանութեան ահսակէտի վրայ։

Եհտագայում ես մասամբ կօգտագործեմ Մարտի բնութագրութեան համար այն նիւթը, որը տալիս է իմ թարգմանութեամբ լոյց տեսած, կունովի գիրքը։

Բայց նախ և առաջ մի քանի խօսք Մարտի դաժանութեան մասին։ «Թէև ես չեմ կարող տեսնել նոյնիսկ ամենափոքր միջատի տանջանքները, բայց և այսպէս նրանք ինձ անւանում են զաժան։ Բայց երբ ես անմում եմ, թէ ինչպէս խնայելով այժմ մի քանի կաթիլ արիւն, թոյլ են տալիս սակայն, որ յետագայում թափւեն ամբողջ հեղեղներով, ինձ համակում է խորին զայրոյթ գէպի մեր կեղծ-մարդկային համկացողութիւնները և գէպի մեր ամսիտ ներողամտութիւնը մեր ամենագաֆան թըզ նամու նկատմամբ։»

Եւ յետոյ, կարծես թէ տեսնելով իր առաջ այն սոսկալի արիւննեղութիւնը, որով ոչակցիան պատկեց իր յաղթութիւնը, նա գրում է. «Եթէ երբեկցէ նրանք կըկին ստանան գերակշութիւն մեր վերաբերմամբ, տեսէք այն ժամանակ, թէ ինչպէս նրանք կճնշեն այն ամենը, ինչ դիմադրութիւն ցոյց կտայ նրանց։ Այն ժամանակ նրանք բնույնութ կանեն նրանց, ով

պաշտպան է կանգնած ժողովրդին, կոչնչացնեն նրանց երեխաներին և կանանց, կրակի կմատնեն քաղաքներ»։

Մարտը գտնում էր, որ եթէ ժամանակին ժողովրդի գէմ ականաւոր գաւադիրների մի քանի տասնեակ չը հեռացնել, նրանց կյաջողւի զաւադրութեան կողմը զրաւել փոքր և խեղճ մարդկանց բազմաթիւ հազարներ և վերջիններին իրանց զիտաւորութիւնների զէնք կարձնել։

1792 թ. նա գրում էր. «Եթէ ես իր ժամանակին խորհուրդ էի տալիս կտրել 500 յանցաւորի գլուխ, ապա տնում էի այդ տառանձնապէտ նրա համար, որպէսզի պահպանած լինեմ էիս միլիօն անմեղներին։ Եթէ այդ կէս հազարը պէտք եղած ժամանակը գլխատուած լինէր, ապա չէին զրկւի իրենց գլուխներից հարիւր հազար մարդիկ, որոնք կուռւմ էին հայրենիքի համար, և միւս հարիւր հազար կեանքերին վտանգ չէր սպասնայ ու մեր զաւանութեամբ չէին լինի յուսահատութեան հասցրած այնպիսի բազմաթիւ որբեր և այրիներ Քաղցը և ահուելի կարիքը համարեա չորս տարի շարունակ չէին դատարկի երկիրը, չէր լինի թշնամի հրոսակների ներս խուժումը Ֆրանսիա, որոնք օգնութեան էին կոչւած կէս հազար ներեած յանցագործներից։»

Ժամանակակից գիտակցութեանը զգւցնում են այդպիսի զուգագրութիւնները, Բայց Մարտը իր ժամանակւայ զաւակն էր. Եւ յամենայն դէպս բերած քաղւածքներից պարզ է, որ այդ մարդը կարողանում էր այդպէս տեսել միայն այն պատճառով, որ գիտէր նաև չափազանց սիրել։

Իսկ Մարտի մասին եղած բոլոր ծշտւած տեղեկութիւնները ապացուցանում են, որ նա անձնապէս դաժան մարդ չի եղել. եղել են գէպքեր, որ նա փրկել է դժբախտ արխտութեաններին կտաղի ամբոխից։

Բայց երբ նա համարեա մարդարէական հայեացքով նախատեսնում էր, թէ ինչպիսի արեան գետերով պէտք է վճարի ժողովրդը մի քանի մեծ դաւադիրների յանցագործութեան փոխորէն, նա անողոք է դառնում։

Մի քանի տասնեակ յանցագործների արիւնը նրա աչքում աւելի թանգ չարժէր, քան տասնեակ և հարիւր հազար ժողովրդական մարդկանց արիւնը։

այն մեծահոգութիւնը, որը դրդեց ձեզ հրաժարւել առանձնաշնորհութեան և ազատել շղթաներից ժողովրդին, որ արդէն դէնքը ձեռքին նւաճել էր իր համար ազատութիւն։ Միայն այն դէպքում, երբ արդէն հասել էր կեղեցիների, հարստահարուների ու բանապետութեան ներկայացուցիչների հատուցման ժամը, դուք ի վերջոյ էր մէջ հանդէս բերիք այդ բարեհօգութիւնը հրաժարւել հողային տուքերից, հրաժարւել ներկայացնել պահանջներ այն մարդկանց, որոնք հազիւ էին կարողանում քարշ տալ իրենց խզութիւնը... Այս ինչ մեծ է ձեր զոհաբերութիւնը... Կամ զուցէ կհրամայէք ցոյց տալ որ դամբայն ձևական զոհաբերութիւն է։ Պէտք կար արդեօք ձեզ հրաժարւել առանձնաշնորհութեան պէտք, միևնույն է, առում էր; որ այդ առանձնաշնորհութեան պէտք է վերջ տրւեն»։

Մարատը անողոք կերպով մերկացնում էր այն գործիչներին, որոնք այն ժամանակ բարձր դիրք ստացան և իրենց դրութիւնը շահագործեցին հարստանալու համար։ Նա մերկացնում էր, թէ ինչպիսի կաշառակերութիւն (որպիսին գոյութիւն չունէր նոյն իսկ հին կարգի օրերին) էր արմատ ձգել քաղաքադուխ Բալիի—Փարիզի Խոշոր բուժութեազիյի հերոսի ժամանակ։ 1789 թ. սեպտեմբերի վերջին նա զրում էր. «Դրութիւնը հետզհետէ վատանում է։ Եթէ գործ չդրւեն բոլոր ուժերը՝ սպասում է անյուսալի ձմեռ, —Փարիզին չի յաջողւի բաւարարել կենսամթերքներով մինչև աշնանային էֆանութեան հասնելը և երթեւելութեան դադարեցումը գետերի վրայ։ Ո՞րն է փրկութիւնը։ Անհրաժեշտ է քաղաքային գումայից արտաքսել բոլոր կասկածվի անձնաւորութիւններին, բոլոր նրանց, որոնք թոշակ են ստանում թագաւորեց, բոլոր բանկիրներին, մականերին և սպէկուլիաներին»։

Դուման կանչեց Մարատին բացատրութեան և արգելեց լրագրավագառներին ծախել «Ժողովուրդի Բարեկամ» լրագիրը։ Բայց նո չէր համարձակւում ենթարկել Մարատին դատաստանական պատավանատութեան, նա վախենում էր այն մերկացութեան գիշտից, «թ կարող էր անել Մարատը դատարանում։ Գործը վերջացաւ Մարատի յաղթութեամբ։ Մի քանի առանձնապէս յայտնի ձայնաւորներ ստիպւած էին դուրս գալ զումայի կազմից»։

1789 թ. շնորհիւամօնարիստիայի տիրապետութեան թրանսիսան կանգնած էր անդունդի ծայրին։ Լիւդովիկ ԽVI-րդը ստիպւած եղաւ համաձայնեւել հաւաքելու երեք դասերի ներկայացուցիչների գողով—ազնւականներից։ հովարականներից և քաղաքացիներից (գիւղացիների հետ միասին)։

Ժողովրդական շարժումը ծաւալւում էր, առանձնապէս Փարիզում։ Այդ բանը խրախուսեց քաղաքի և գիւղի ներկայացուցիչներին։ Նրանք բանեցին զեկավարող պիրք և իրենց Ազգային ժողով, յայտարարեցին այսնքն ներկայացուցչութիւնը, ոչ թէ դասերի այլ ժողովուրդի։ Յուլիսի 14-ին Փարիզի ժողովուրդը խորտակեց Բաստիլիան։ այն բանտը, որտեղ տանջւում էր քաղաքական բանտարկեալները (ինչպիսին ցարական թուսամանական Շլիսելուրդի և Պետրոպավլովսկայա բանտերն էին), Փարիզից շարժումը ծաւալեց գաւառ և համակեց գիւղերը։

Դիւղացիները սկսեցին հրաժարել իրանց վրայ ծանրացող տուրքերից, որ նման էին ուսուական ճորտական գիւղացիութեան տուրքերին։ Նրանք յայտարարեցին, որ կալւածատէրերը իրաւունք չունեն պահանջելու կատարել որոշ պարտականութիւնը խլել էր հէնց իրեն՝ գիւղացիութիւնից։ Ազնւականութիւնը և հողեւորականութիւնը, ժամանակակից խոշոր հողատէրերը, որոշեցին ազատել այն՝ ինչ դեռ ևս կարելի էր պիրկեր։ Օգոստոսի 4-ի գիշերը նրանք ամենայն հանգիստականութեամբ յայտարարեցին Ազգային ժողովում, թէ յօժարակամ հրաժարւում են իրենց առանձնաշնորհներից։

Բուրժուական պատմագէտները մէկ դարուց աւելի կրկնել են, թէ հրաժարւելը տեղի է ունեցել իսկապէս յօժարակամ։ Բայց այն ժամանակ արդէն Մարատը պարզ կերպով տեսնում էր, թէ ինչից առաջացաւ այդ հրաժարումը։

Իր «Ժողովրդի Բարեկամ» լրագրում նա զրում էր. «Եթէ դուք միայն բարեգործական մաքով տրիք այդ գոհը, այդպիսի դէպքում, պէտք է խոսովանել, շատ երկար պէտք եղաւ սպասել մինչև որ այդ բանը հանդէս կըդար։ Այս, միայն ձեր այլուղ դիակների հրդեհից դուք երևան բերիք ձեր մէջ

Կառավարութիւնը, որպէսզի կանոնաւորի ֆինանսական յուսահատելի դրութիւնը, բաց էր թողնում պետական նոր փոխութիւնը և մտցնում էր նոր տուրքեր, որոնց զլիքաւոր ծանութիւնը ընկնում էր չքաւորութեան վրայ: Մարատը գրում էր. «Այսպէս ուրեմն, որպէսզի ապահովեն հին փոխառութեան անգործ պարտապաններին, որպէսզի առձիկ վճարեն թագաւորի թոշակաւորներին, անգործ գեսպաններին, վտանգաւոր հրամանատարներին ու նահանգապետներին, հարձերին, սրիկաներին, նախկին մինիստրներին, մատնիչներին, շարլատաններին, պարողներին, դրա համար խեղճ արհեստաւորները, խեղճ բանւորները, ողորմելի օրավարձով աշխատողները, որոնք ոչինչ չեն շահել ոչ մինիստրական Փօկուսներից, ոչ յեղափոխութիւնից (յեղափոխութիւնը այդ ժամանակ դեռ ևս իր առաջին աստիճանների վրայ էր գտնւում), — միթէ դրա համար նրանք ողէտք է թոյլ տային կեղեքել իրենց: Խնչպէս. նրա համար, որպէսզի սպէկուլիանտները կարողանային շարունակել իրենց խաղը, հարկանանները իրենց կողովառումը, նրա համար, որպէսզի ժողովրդի թշնամիներին, շահագործողներին և բանակալներին ապահովեն նրանց սեփականութիւնը քսան միլիոն ժողովորդ պէտք է ման գայ աշխարհում աղքատութեան տոպակով»:

Այդ բանը լցրեց համբերութեան բաժակը բուրժուազիայի, որը այն ժամանակ բաժանում էր իշխանութիւնը հին Թրանսիայի հաւատարիմների հետ միասին: Հոկտեմբերի 8-ին «Ժողովրդի Բարեկամը» արժանացաւ արգելման, և դատարանը հրատարակեց Մարատի բանտարկութեան հրամանը:

Մարատին յաջողւեց թագւել: Նա ծածկւում էր իր քաղաքական համախոնների մօտ և միշտ փոխում էր ապրելու տեղը, որպէս զի չգտնէին: Շատ շուտ արդէն, նոյեմբերի 5-ին, չնայած արգելմանը, կըկին սկսեց լոյս տեսնել «Ժողովրդի Բարեկամը»: Շատ անգամ գրաւեցին թերթը, շատ անգամ գտան տպարանները, որտեղ լրագիրը ծածուկ կերպով տպւում էր: Բայց ոչինչ Մարատին չէր կանդնեցնում: Այդպիսի պայմաններում նա հրատարակեց «Ժողովրդի Բարեկամի» քառասուն համար:

III ցեղախան Յանաչեան բարժուազիան, նատելով Ժողովուրդի ուսերին, ճգնում էր հիմնաւորել իր դրութիւնը: Նրա ներկայացուցիչները Ազգային Ժողովի միջոցով անց էին կացնում օրէնքը որը տալիս էր հարուստներին ընտրողական լայն իրաւունքը, իսկ չքաւորութեանը բոլորովին հեռացնում նոր պետութեան կազմակերպութեան գործից: Եւ Մարատը կրկին դուրս եկաւ այդպիսի ծրագիրների դէմ: Նա գրում էր. «Այդպիսի ընտրական իրաւունքով երկիրը նորից արւում է հարուստների ձեռքը, իսկ չքաւորութեան վիճակը, որին միշտ ճնշել ու ստրկացրել են, երբէք չի լաւանայ: Դա ամենահամոզեցուցիչ ապացոյցն է այն ազդեցութեան, որ հարուստները գործում են օրէնքի վրայ:»

Բայց օրէնքները ոյժ ունեն միայն մինչեւ այն ժամանակ, երբ դեռ ևս Ժողովրդները համաձայն են նրանց հըպատակելու: Եւ եթէ նրանք ձգեցին ազնւականութեան լուծը, պապ կարող են ձգել և այն լուծը, որի տակ նրանց պահում են հարուստները: Զքաւորութիւնը կարող է վերադառնալ ազատութեան և հաւասարութեան սկզբունքներին, որպէսզի վերջ դնի հարուստների առանձնաշնորհումներին և հարստահարմանը, ճիշտ այնպէս, ինչպէս այդ միջոցներին դիմեց բուրժուազիան՝ ոչընշացնելով ազնւականների առանձնաշնորհումները»:

Դա նոր իշխանութեանը «Հապատակելու մի կոչ էր: Մատնիչները ուժեղացրին հետապնդումները և վերջադէս գտան Մարատի տեղը: 1789 թ. դեկտեմբերի 12-ի առաւոտը ազգային զվարդիայի քսան հոգուց բաղկացած մի խումբ (համապատասխան միլիցիայի, որը ամբողջապէս գտնւում էր բուրժուազիայի ձեռքը) թաղային կօմիսարի օգնականի զլիքաւորութեամբ, ներս խուժեց Մարատի թագստեան տեղը, ձեռք ձգեց նրա բուրժութերը և տարաւ քաղաքական յանցագործների գործով զրադւող կոմիտէին: Նրան շատ անգամ և երկար հարցաքննեցին, բայց բաց թողեցին առանց որևէ հետեանքի «Ժողովրդի Բարեկամը» արդէն յաջողեցրել էր Փարիզի չքաւորութեան մէջ ձեռք բերել լայն համակրութիւն և բուրժուազիան վախենում էր նրա հետ ընդհարւել:

Մարատը արդէն ազատ կերպով ձեռք բերեց ձեռքի տպագրա-

կան մեքենայ և վերսկսեց իր գործունէութիւնը։ Նա չեր թողնում առանց քննադատութեան բուրժուազիայի և ոչ մի զործ, երբ վերջինս շտապում էր յարմարել։ բայց բուրժուազիան էլ աղատ չեր թողնում նրան իր նւշադրութիւնից։ Նորից հետեւցին Մարատի ձերբակալման հրամանները, նորից Մարատի բնակարանը ենթարկեց դատաստանական չինօվիկների և ազգային գվարդիականների յարձակումներին։ 1790 թ., յունեարի 23-ի գիշերը կանչւած էր ազգային գվարդիայի ամբողջ գունդը որը շրջապատեց բոլոր շրջակայ փողոցները, մինչ խուզարկութիւնը կվերջանար Մարատի կացարանում։

Հարկ եղաւ Մարատին առեամանակ կանգնեցներ լրացրի հրատարակումը։ Բայց ժողովրդական գործի կրակու մարտիկը չը կարողացաւ երկար լուր Մայիսի 18-ին արդէն նա վերադարձաւ Փարիզ և վերսկսեց ճողովրդի Բարեկամը։ Նորից պէտք եղաւ շարունակ խուսափել դատարանի հետապնդումներից ազգային գվարդիայի պետ չափաւոր-լիբէրալ դատարկախօս Լաֆայէտից, —որը վիրկեց թագաւորական իշխանութիւնը և Փարիզի բարժուազիայի կուռքն էր, —խուսափել մատնիչներից, որոնք շարունակ հետեւում էին նրան։ Ամբողջ մի քանի շաբաթ նա ստիպւած էր չերկար լողոցներում, որտեղ և աղաւանց շուտափոյթ ձերբակալումից։ Շաբաթին նա վթագնուում էր իր բարեկամների մօտ նկուզներում և այստեղ ճարպի մօմի լիյոր տակ զրում էր իր յօւածները, որը յետոյ տպում էին նրա բարեկամները, որոնք մատակարարում էին նրան նաև ուստելիք։ Եեղափոխութեան այդ շրջանում Մարատը ժողովրդական գործից էր բարի բուն իմաստով։ Ցարձակումն ազգային գվարդիայի — ճուրժուազիայի պրեմորական գվարդիայիր — վրայ, ծաղը Փարիզի բուրժուազիայի պատերազմական հանդէսների կազմակերպման և «զինուր խաղալու» վրայ, ընտրողական օրէնքի անսոզք քննադատութիւնը, որը պետութեան և տեղական ինքնավարութեան օրդանների մէջ իշխանութիւնը տալիս է հարուստների ձեռքը, գործիչների դղւանքով մերկաց ցումը՝ որոնք լցնում էին գրապանները այն բռպէին, երբ Փարիզի չի չքաւորութիւնը չեր կարողանում հաց ճարել և ստիպւած էր վճարել սարսափելի զներ, — այս բոլորը բաւական են հիմք ծառայելու այն բանի, որպէսզի բուրժուազիան պատմազէսները ա-

ւելի քան հարիւր տարի դարձնէին Մարատին չար, անողոք և անզութ ճրէց։

## IV

«Փողովուրդի Բարեկամին» կից Մարատը միշտ լոյսէր ընծայում երբեմն յաւելումն, մի տեսակ պրօկլամացիա։ 1790 թ. յուլիսի 14-ին նա մերկացրեց յեղափոխութեան թշնամիների դիւային դաւադրութիւնը։ Նա բացարեց որ այդ դաւադրութիւնը պատրաստում էր բուրժուազիայի ժամանակակից պատւածների Միրաբօյի, Լաֆայէտի և Սիէյսի ձեռքով, որոնց համար յեղափոխութիւնը այդ ժամանակ արդէն զատ հեռաւ էր գնացել, որոնք անհանգուութեամբ դիտում էին ժողովուրդական շարժման ծաւալումը և պատրաստ էին հաստատել խախտած թագաւորական իշխանութիւնը, տեսնելով նրա մէջ պաշտպանութիւնը ժողովրդի դէմ։

Մերկացւած հերոսների կատաղութիւնը սահման չէր հանաչում։ Նրանց հետազները ջարդեցին տպարանի պատուհանները, որտեղ ապագրուում էր ճողովրդակամը, լրագրավաճառներին ծեծեցին և յաջողեցրին Մարատի ձերբակալման նոր հրամանը։

Լաֆայէտը զիմեց բոլոր միջնուների Մարատին բռնելու համար։ Ամեն օր Մարատը փոխում էր իր ապրելու տեղը, փոխադրում էր մի ընկերոջ նկուզից սիւսի մօտ, մինչև որ վերջապէս տեղ գտաւ մէկ փակած գրանցիսկեան վանքի նկուզում։ Նրա առողջութիւնը առանց այն էլ թոյլ էր։ Մշտապէս մութ նկուզներում ապրելը, իրենց խոնաւ ու խեղզող օդով, առաւել ևս խախտեց նրա առողջութիւնը։ Սկսեց աչքերի պարբերական բորբոքումը և կաշէ տանջող քսուց։

Բայց ոչինչ չէր կարող ընկճել ժողովրդական աղաւածութեան հերդուն։ Նա շարունակում էր բաց թողնել իր թառցիկները։ Արդէն 1790 թ. յուլիսի 26-ին լոյս տեսաւ կըքստ կոչը «ի՞նչ է, մեղ այլես հաշւի չին պանում»։ Այդ բանը առաջացրեց բուն զայթյթ Մարատի դէմ բոլոր միտղետական չափաւոր-լիբէրալ շրջաններում։

Լիւզովիկ ԽVI-րդը և նրա կին Մարիա Անառանէտան դեռ ևս մնում էին թագաւոր և թագուհի։ Թրանսիսայում կըկին մնում

Էր այնպիսի քաղաքական կազմ, ինչպիսին մարտի սկզբին լիբէրալ բուրժուազիան ցանկանում էր պարզեցնել Ռուսաստանին, կատարելով անհատների փոփոխութիւն գահի վրայ:

Մարտաը իր թռուցիկում յայտարարեց, որ թագաւորը պատրաստում է ծածուկ Փարիզից փախչել Սէն-կալուի վրայով կօմպիեն, որտեղ՝ նրան կհանդիպեն ժողովրդի դաւաճան ֆրանսիական գեներալախերը, և այստեղից պատերազմի հրաւիրել օտարերկրեայ զօրքերը յեղափոխական Ֆրանսիայի դէմ: Մարտը գրում էր. «Բոլոր հասակների և ընդունակութիւնների քաղաքացիներ, Ազգային ժողովի միջոցները չեն փրկի ձեզ կործանումից: Դուք կորած էք, եթէ զէնքի չդիմէք, եթէ դուք նորից չհամակէք այն հերոսականութեամբ, որը երկու անգամ փրկեց Ֆրանսիային, յուլիսի 14-ին և հոկտեմբերի 5-ին (Բաստիլիայի կործանման օրը և այն օրը, երբ Փարիզի ժողովուրդը տիրեց թագաւորին և նրա ընտանիքին և ստիպեց նրանց տեղափոխել Փարիզ, որտեղ նրանք գտնւում էին յեղափոխական ժողովրդի հսկողութեան տակ): Քանի զեռ ևս չի անցել ժամանակը, զնացէք Սէն-կալու, բռնեցէք թագաւորին և նրա ժառանգին, նրանց դրէք հսկողութեան տակ, որպէս զի գալիք դէպքերի ժամանակ նրանք լինեն ձեր ձեռքում, բանտարկեցէք բանալիով աւտրիաշխային (Մարիա-Անտուանէտային) և նրա ազգականներին, նրանց զրկեցէք դաւադրութիւնը շարունակելու հնարաւորութիւնից. բռնեցէք բոլոր մինիստրներին և նրանց քարտուղարներին, զղթայեցէք բռնեցէք Փարիզի դումայի նախագահին, հսկեցէք գեներալախերի վրայ, ձերբակալեցէք զինուրական մինիստրին, ազակովեցէք ձեզ համար զինապահեստները և վառողի պահեստները, ժողով հրաւիրեցէք թաղամասերում և որոշեցէք շուտով ինչ անել: Դուք շուտով կտեսնէք, որ առանձնաշնորհումներ ունեցող դասերը կրկին կբարձրացնեն. իրենց գլուխները, և նորից կմկսի թագաւորել բռնակալութիւնը—դաժան բռնակալութիւնը, աւելի դաժան, քան հզել է երբերցէ առաջներում: Հինգ կամ վեց հարիւր կտրած գլուխներ կտպահովէին ձեզ հանդստութիւն, ազատութիւն և բախտաւորութիւն: Կեղծ հաւատքմատարութիւնը և անհոգութիւնը թուլացրել է ձեր ձեռքը, կասեցրել է այն հարւածները, որ նա պատրաստում էր հասցնելու: Դրա փոխարէն դուք կվճարէք ձեր եղբայրների

միլիօնաւոր զլուխներով: Հերիք է ձեր թշնամիներին մի ըօպէ յաղթանակել, և այն ժամանակ վերջ կարւի նաև ձեր ազատութեանը. հսկայական գետերով կը հոսի արիւնը, ձեղ առանց որևէ խղճահարութեան, յօշուման կմատնեն»:

Այդ բասերը եղան տարօրինակ նախատեսութիւն: Մարտի յեղափոխական տաղանդը ճշտութեամբ նախատեսեց այն բոլորը, որ պատահեց համարեա մէկ տարի յետոյ: Մեծ թախիծ, խորը ցաւ է հնչում նրա զգուշացումների մէջ: Նա պարզ տեսնում էր, թէ ինչպէս պիտի դասաւորեն դէպքերը: Ուրիշները այդ բանը չէին տեսնում և ֆրանսիական ժողովուրդը արեան գետեր վճարեց իր անհոգութեան և հաւատի պատճառով:

„Քաղաքավարի հասարակութեան՝ կատազի վայնասունն եղաւ այդ մարգարէութեան պատասխանը: Գործին խառնը-ցեց. ինքը „ժողովրականն՝ ներկայացուցչութիւնը—ինքը Ազգային ժողովը: Նա պահանջեց, որպէսզի սկսեն դատապահնական քննութեաններ ոչ միայն Մարտի դէմ, այլև ապարանատիրոջ դէմ, որը տպել էր թռուցիկը, նրանց դէմ, որոնք դուրս էին տարել այն ապարանից և ծախել: Մարտը մեղադրում էր ֆրանսիական ազգը վիրաւորելու մէջ, ապստամբութեան և սահմանադրութեան բանի փոփոխման մէջ, որը կարայայտէր թագաւորական իշխանութեան վերացմամբ:“

Ի հարկէ բոլոր ապադայ բուրժուական պատմագէտների աշքում, ինչպէս նաև ժամանակակից բուրժուազիայի աշքում, Մարտը դժողբի ծնունդ է եղել: Այդ պարզների համար, բոլոր թագաւորների և բոլոր արտօնեալ դասակարգերի սուրբ, անհերքելի իրաւունքը կայանում է նրանում, որ նըանք իրենց թագաւորութեան պահպանման համար կարող են կատարել սարսափելի արիւնոսութիւններ և ջարդեր, հարգ եղած դէպքում կանչել օտար զօրքեր ջարգելու համար իրենց „հաւատարիմ-հպատակներին“: Բայց ժողովրական լոյն մասնակիցների իրաւունքների դէմ հանդիսանում է այդ նոյն պարզների համար շրմած, ամօթալի սրիկայութիւն: Ի հարկէ, Մարտը նրանց համար, յարիւնախում դադանէ:

ծառ մեջ պահպանութեան ուն չ V դիմք խողովաց յատ օդիք և  
ուսուրա զի ուն վայ ջուկ բաւանա մշա և այսունա երա  
Զօրքում, աւելի ճիշտն ասած, գաւառական քաղաքների  
նոր ազգային գվարդիայի մէջ անհանգստութիւն էր մտել:  
Շարժման գլուխ կանգնել էին յեղափոխութիւնը ատող ազնա-  
կան սպաները, իսկ ազգային գվարդիականների և զինուրների  
ճնշող մեծամասնութիւնը դիւղացիներն էին, որոնց յեղափոխու-  
թիւնը արդէն ազատել էր շատ ծանր պարտականութիւններից:  
Օքիցէրութիւնը ձգտում էր զինւած ուժը վերածել ժանդարմ-  
ների կօրպուսի թագաւորական իշխանութեան յենարանի: Ընդ-  
հարումներն անխուսափելի էին, 1790 թ. յուլիսին, նանսի քաղա-  
քում նախք ստացան սպառնալի բնաւորութիւն: Ազգային  
ժողովը խոնարհ զէնք էր խոշոր բուրժուազիայի ձեռքին, որը  
արդէն ամեն ինչ ստացել էր և ցանկանում էր կանգնեցնել յե-  
ղափոխութեան ապագայ առաջնադաշտումը: Ցուլիսի 29-ին թա-  
գաւորը առաջարկեց ժողովին նանսի „խոռվարանների“ դէմ ու-  
ղարկել պատժիչ զօրախումք զիներալ Բուլիի հրամանատարու-  
թեան տակ և ժողովը ընդունեց այդ առաջարկը: Ցուցած, բայց  
ոչ ոչնչացրած թագաւորական իշխանութեան հետ միասին, օֆի-  
ցէրութեան, թագաւորի համախմների հետ, բուրժուազիան  
յոյս ունէր հակառակ ոյժ ստեղծել ժողովրդի աճեցող պահանջ-  
ների դէմ:

Նոյն զիշերն իսկ Փարիզի փողոցներում կզցրած էր Մա-  
րտի ձեռքով կազմած և տպած թառցիկը, Մարտափելի արթ-  
նացումն վեռնագրով: Նա գրում էր, «Դուք հերոսներ, շտա-  
պեցէք խանգարել այդ պատժիչ զօրախմբի ուղարկմանը. նա-  
յեցք այն անգունդին, որ ձեր կեղծ ներկայացուցիչները քան-  
դել են ձեր ուղերի տակ, այն անգունդին, որտեղ նրանք կը  
ցանկային ձեղ նետել: Զէ որ այն մարդիկ, որոնց ջարդ տալու  
համար գուք պատրաստում էր, նրանք ձեր եղբայրներն են,  
նրանք մեղաւոր չեն, նրանք ճնշւած են: Արդարադատ երկինք,  
իմ բալոր զգացումներու գրդուռում են և սիրտս պայթում է  
զզւանքից: Դուք, քնած քաղաքացիներ, մի՞թէ զուք թոյլ կը-  
տաք, որպէսզի ջարդեն ձեր եղբայրներին: Մի՞թէ զուք չէք  
շարժակ ձեր տեղերից, երբ այդ դահիների լէգիօնները զուրս  
կդան, որպէսզի սպանդանոց սարքեն: նանսի գարնիզօնի զին-

որները անմեղ են, նրանց ճնշում են, նրանք դէմ են կանգնել  
միայն բռնակալութեանը՝ և նրանք իրաւունք ունէին այդ բանի:  
Նրանց հրամանութեանը — ահա միակ մեղաւորները»:

Պատժիչ զօրախումքը մեկնեց նանսի: Այդ քաղաքի փո-  
ղոցներում թափեց զինուորների արիւն, ժողովրդի արիւն: Մա-  
րտը կատաղի ծաղրանքներով և ծանակով հարւածում էր ա-  
րիւննեղութեան պատճառները, նրանց, որոնք Ազգային Ժողո-  
վում այդ գործին կողմնակից էին արտայայտել:

Սուանձնապէս կատաղի էր յարձակում նա չափաւոր-լիրե-  
րալ բուրժուազիայի երկու կուռքերի վրայ — Միրաքօյի և գինե-  
րալ Լաֆայէտի: Մարտը այն ժամանակ հասկացել էր, որ Մի-  
րաքօն թագաւորական իշխանութեան հետ միասին դաւադրու-  
թիւն է կազմում: Ժողովրդի դէմ և որ արքունիքը ապատ կեր-  
պով վարձատրում է նրա ծառայութիւնները: Որովհետև Միրա-  
քօն ծագում էր իտալական Միկէտի լնտանիքից, զրա համար  
էլ Մարատը սովորաբար անւանում էր նրան այդ անունով: Նա  
գրում էր, «Դեռ ևս երկու տարի սրանից առաջ Միկէտին պէտք  
է վաշխառուի մօտ գրաւ դնէր իր վարտիկը վեց լիքով (երկու  
ուուրլի), իսկ այժմ նա ինդղուում է շուայլութեան մէջ և պահում  
է հարձեր, որոնց ողողում է նւէրներով»:

Մարտը հաշւեց և գտաւ, որ վերջին ամիսների ընթացքում  
Միրաքօն գործ էր ածել կալւածքներ զնելու համար խոշոր գու-  
մար — մօտաւորապէս երեք միլիոն լիվր (մեր փողով մէկ միլիո-  
նից աւելի շատ): Երկու տարի յետոյ, երբ պալատում աշքի  
անցիացրին ծածուկ փաստաթղթերը, Մարտի կառկածները  
հաստատեցին միծ ճշութեամբ:

Լաֆայէտի ճիշտ գնահատումն տևեց Մարտը — այդ ժատարկ  
շատախօսի, անհեռատես քաղաքական կօմենդիանտի (ծալըրա-  
ծուի), ցանցափի, ինչպէս յետագայում անւանեց նրան Նա-  
պէլիօնը: Մարտը խոստանում էր, 1780 թ. սեպտեմբերի 14-ին  
«Ժողովուրդի Բարեկամի» ամբողջ համարը նւիրել Լաֆայէտին:  
Լաֆայէտը ձեռք արաւ իր միջոցները: Երեք հարիւր ազգային  
զգարդիականներ շրջապատեցին ապարանը, որտեղ ապլում էր  
Մարտի լրագիրը և ոչնչացրին բոլորովին:

Յեղափոխութեան սկզբին Մարտը հակառակ չէր թագա-  
ւորական իշխանութեանը: Ետոյ նա լիւզովիկոս XVi-րդին հա-

մարում էր ողորմելի մարդ, բայց ոչ չար: Ժողովուրդի համար թագաւորի արած զանակար հրամանների մեջաւորները Մարատի աշքում վատ խորհրդատուններն էին, որոնք շրջանպատռում էին իւստիվիլին: Հեռացնելով այդ խորհրդատուններին և սահմանական իշխանութիւնը, Մարատը հնարաւոր էր համարում նրա պահպանումը: Ժամանակի ընթացքում Մարատի թագաւորական իշխանութեան մասին գատողութիւնների մէջ յաճախ էին նկատում տատանումներ:

Բոլոր տատանումներին հասաւ վերջ, երբ 1791 թ. յուլիսի 20-ից 21-ի գիշերը թագաւորը ծածուկ իր ամրադրութանիքի հետ փախաւ Փարիզից: որպէսզի դաւաճան գեներալ Բալէի զօրքի հովանաւորութիւնը գտնի և օտարերկրեայ զօրքի օդութեամբ զսպի յեղափոխական Թրանսֆորմիյն:

Թագաւորին ճանաչեցին ճանապարհին, ձերբակալեցին իր ընտանիքի հետ միասին և յուլիսի 26-ին զինւած քազաքացիների հակողութեան առաջ բերին Փարիզ:

Յունիսի 27-ին Մարատը այսպէս ողջունեց նրան իր, ,Ժողուժուրդի բարեկամութեամբ, .,Տեսէք, ահա նրան վերադարձին մեր պատերի մէջ, այդ թագավորած աւագակին, խոստմազանցին, մատնիչին և դաւաճանին, այդ անպատիւ և անխիզմ սրիկային: Թափորի մէջ, որը վերադարձնում էր ժողովուրդից զերւածին, նատած էր նա իր չարագործութեան համակիրներով առօթ չզգալով անհամար քաղաքացիների աշքի առաջ, որոնք մի ժամանակ նրա ստրուկներն են եղել: Մէկ ուրիշը նրա տեղը կմեռնէր ցաւից և ամօթից: Բայց նրան յատուկ են միմիայն անասնային յակումներ: Ամբողջ ժամանակ, երբ նա զտնուում էր զինւորների ձեռքին, չեր գագարում ինքը կուուց, որպէսզի նրանք ցաւ չպատճառէին իրեն, և ոչ մի ուրիշ միտք քացի խմելուց և ուտելուց, նրա զինուամ ոչինչ չեր ծագում:

Բուրժուազիայի ձեռքին էր դանուում աղդային գվարդիան և քաղաքային ինքնակարութիւնը, նրան էր հսկաւակւում Ազգային ժողովը: 1791 թ. յուլիսի 17-ին, երբ Մարսիան դաշտում կազմակերպւել էր մեծ ցոյց, որ պահանջում էր Բուրժուաներին յաջտարարել գահընկեց, բուրժուազիայի պատարիանը եղաւ անողոք ջարդը, որը ծածկեց Մարսիան դաշտը հանրապետական ների զիսկներով:


Սկսեց սոսկալի բէակցիա: Բուրժուազիան շտապում էր իր հաշիւները տեսնել հակառակորդների հետ: Մարատի քաղաքական բարեկամներից շտաբը ստիպւած էին փախչել: Նրա տպարանը քարուքանդ արւեց, տպարանի հսկիչը բանտարկւեց: Մարատը մնում էր իր դեքուում: Եւ միայն 1791 թ. սեպտեմբերին, կիսով չափ կոյր, վերջնականապէս հալածանքներից և անդադար լարւածութիւնից ուժասպառ եղած, նա որոշեց մեկնել Անգլիա, որտեղ մտածում էր իբրև բժիշկ աշխատանք գտնել:

15  
10  
20  
28  
30

Սեպտեմբերի 4-ին նա գրում էր. «Ժողովուրդը մեռած է Մարսեան գաղտի ջարդերից յետոյ: Ես աշխատում էի նրան վերակենդանացնել, սակայն իզուր: Բայց ինչ արած, այդպիսի գէպրում ես հեռանում եմ և, թւում է ինձ, ընդ միշտ»:

Սեպտեմբերի 21-ին հիւանդ և յոդնած նա գրում էր. «Առանց փողի, առանց օդնութեան ևս գնում եմ աշխարհի միակ անկիւնը, որտեղ ինձ դեռ ևս թոյլ կտան հանգիստ շնչել: Գնում եմ հալածւած բամբասանքային գոռոցից, կասկածի տակ ընկած այն հասարակական շրջմուիկներից, որոնց ևս մերկացնում էի, արժանանալով հայրենիքի բոլոր թշնամիների անէծքներին, առած այդ տշխարհի բոլոր ուժեղներից, ճանաչւած իբրև նրէց, որին պէտք է ջախջախել, հալածւած բոլոր մինհստրական կարիքնէաներում նստած բարձրաստիճան պաշտօնեան երից»:

Իր հայեացքն ուղղելով գէպի յետ, զէպի այն բոլորը, ինչ որ պատահել էր, Մարատը ցոյց է տալիս, թէ ինչպէս սկզբում յեղափոխական շարժումը ծաւալւում էր և ինչպէս յետոյ բուրժուազիան վերադառնում էր զէպի առքունիքն ունեցած իր նախկին հաւատարմութեանը: Նա շարունակում է. Ծիսկ այդ փառասէր քսուների շուրջը, իբր պաշտպան թիկնապահներ շուտով խմբեցին, զզւելի արքունական գետադանիներ—ազնւականութիւնը, հոգուրականութիւնը, աստիճանաւորութիւնը, դատաւորները, պետական և դատաստանական ծառայողները, բանկիրները, սպեկուլիաները, հասարակութեան տղրուկները, թեթեամիտները, պաւատի բախտախնդիրները և պարագիտները, մի խօսքով, բոլոր նրանք, որոնց դրութիւնը, հարուստթիւնը, և յոյսերը հիմնում են



պետական իշխանութեան շահագործման վրայ, բոլոր նրանք, ո-  
րոնք շահւում են այդ թերութիւններից և շոայլութիւնից,  
ամեն խաբերայութեան պահպանութեան շահագրգռւածները, ո-  
րովհետև այդ խաբերայութիւններիցն է, որ նրանք հարստանում  
են: Իսկ նրանց շուրջը հետզհետէ խմբւեց աւելի լայն շրջան—  
միջոցների մէջ խտրութիւն չգնող գործնական մարդիկ, վաշ-  
խառուները, շոայլութեան համար ապրանքներ պատրաստող  
արհեստագործները, գրականագիտները, գիտունները, արտիստ-  
ները, որոնց համար հարուստների շոայլութիւնը իրանց հարստա-  
նալու միջոց է, խոշոր վաճառականները, կապիտալիստները և այլն,  
հանգստութիւն տեսչացող քաղաքացիները, որոնց համար ազա-  
տութիւնը նշանակում է միայն նրանց արհեստներին խանգարող  
արգելվների վերացումը, միայն իրենց սեփականութեան հիմնա-  
ւորումը, որը ոչնչով չի խանգարի նրանց կեանքի քաղցրու-  
թիւնը: Իսկ նրանց յարում են այն երկշուները, որոնք աւելի  
քիչ են վախենում ստրկութիւնից, քան քաղաքական կեանքի  
խռովութիւններից, և այն ընտանիքների հայրերը, որոնք վա-  
խենում են, որ պայմանների փոփոխութիւնը զրկի նրանց այն  
գիրքից, որ նրանք բռնում են ներկայ հասարակութեան մէջ:  
Հարց տալով, թէ մըն է քաղաքական յեղաշրջման և յեղափո-  
խութիւնից հետանալու պատճառը, Մարատը պատասխանում է.  
«Պատճառը կայանում է տարբեր շահերի հակասութեան մէջ,  
որը բաժանում է քաղաքացիներին տարբեր հասարակութեան դա-  
սակարգերի, պատճառը յեղափոխութեան թշնամիների բնական  
միութեան, արքունիքի ազդեցութեան և ժողովրդի տգիտու-  
թեան մէջն է»:

Մարատի մարտնչող ոգին թողնելով Փարիզը, էլի մի քանի  
ժամանակ մնաց Ֆրանսիայում: Նա սպասում էր, թէ չե՞ն ստեղծ-  
վի արգեօք աւելի բարեյաջող պայմաններ յետագայ կուի հա-  
մար: Օրէնսդիր Փողովի ընտրութիւնների ելքը ցոյց տւեց, որ  
նա կը լինի մի քիչ աւելի պատասխութեան, քան Ազգային Ժողովը:  
Իր երրորդ նիստում նոր ժողովը երդեց, որ բոլոր կէտերում  
կը պաշտպանի սահմանադրութիւնը, այն սահմանադրութիւնը,  
որ համարեա ամբողջ ֆրանսիական ժողովրդի երեք քառորդին  
զրկել էր ընտրողական իրաւունքից: «Այս կօմելիքան,—դրսւմ էր

Մարատը,—ցոյց է տալիս, որ ազատութիւնը թաղել են: Նոր  
օրէնսդիրների արժէքը նոյնն է, ինչ որ նախկիններինը»:

Միայն զեկտեմբերի 14-ին Մարատը վերջապէս թողեց  
Ֆրանսիան և ուզերւեց Լոնդոն:

## VI

1792 թ. փետրւար ամսի սկզբին Մարատը վերադարձաւ  
Ֆրանսիա և վերսկսեց իր «Ժողովրդի Բարեկամի» հրատարա-  
կութիւնը: Իշխանութեան ղեկը այն ժամանակ գտնում էր  
բուրժուազիայի այն հատածի շահերի ներկայացուցիչ ժի-  
բունդիստների ձեռքին, որոնք աւելի սերտ էին կապւած առե-  
առուրի և արդիւնաբերութեան զարգացման հետ: Արդէն այն ժա-  
մանակ բուրժուազիան ցոյց էր տալիս նւաճողական ձգտումներ:  
Ժիբունդիստական միախարութիւնը պատրաստում էր Ֆրանսիա-  
յին պատերազմի զիրկը նետել, որը պէտք է ընթանար բռնակալ-  
ների տապալման դրօշակի տակ, բայց պէտք է զեկավարւէր այն  
մինիստրութիւնից, որը յանձինս իր մի քանի ներկայացուցիչների,  
ժողովրդից ծածուկ, թագավորական արքունիքի հետ կատածելի  
կապեր էր հաստատել և պատրաստ էր նեցուկ դառնալ ֆրան-  
սիական զահին:

Քօմէսպիենը, որը արդէն այդ ժամանակ կուի էր սկսել  
ժիբունդիստների դէմ, գրում էր. «Ես էլ պահանջում եմ կուի,  
բայց մի պայմանով, որի վերաբերեալ, ինձ թւում է, մեր մէջ  
տարածայնութիւն չկայ. չեմ կարող ես մտածել, որ պատերազմի  
կողմանկիցները ցանկանում են մեկ խարել: Այսպէս ուրեմն ես  
կուի եմ պահանջում, ոչ թէ կեանքի, այլ մահու, հերոսական  
կամ, այնպիսի կուի, որպիսին ազատութիւնը վարում է բռնա-  
կալութեան դէմ, այնպիսի կուի, որպիսին կվարի ինքը  
յեղափոխական ժողովուրդը իր յեղափոխական զեկավարների ա-  
ռաջնորդութեանը, բայց ոչ այնպիսի կուի, ինչպիսին ցանկա-  
նում են քուները: Սակայն այդպիսի դէպքում տւէք մեզ զենե-  
րալներ, որոնք ժողովրդի իրաւունքների հաւատարիմ պաշտ-  
պաններն ու մանկութիւնից բռնակալների թշնամիները լինեն,  
այնպիսի գեներալներ, որոնք երբէք չեն չնչել արքունիքի թու-  
նաւորւած օդը: Այսպէս ուրեմն, ձգտելով ոչնչացնել զահերը,

պէտք է մենք սպասենք պատերազմական մինիստրի հրամաններին, պէտք է սպասենք, քանի դեռ ևս թագաւորական տունը նշան չի տել, Ուրեմն, թագաւորների և արիստօկրաց հրի դէմ պատերազմի տանեն մեզ ազնւականները, բռնակալութեան այդ մշտական սիրելիները... Ոչ, մենք մենակ կդնանք կոիւ, մենք ինքներս կառաջնորդենք»:

Մարատը երևան եկաւ իրեն պատերազմի որոշակի հակառակորդ: Վերանորոգւած «Ժողովուրդի Բարեկամի» առաջին իսկ համարում նա յայտարարեց, որ պատերազմի հետևանքը յեղափոխութեան ուժերի թուլացումը կլինի և ժողովրդի ուշադրութեան շեղումը իր սեփական դրութիւնից, ներքին գործերից, անյետաձգելի բարեփոխութիւնների ճգճգումը և պատերազմական կուսակցութեան ուժեղացումը»:

Նորից սկսւեցին հալածանքները: 1792 թ. մայիսի 4-ին ժիրօնդիստներին յաջողւեց Օրէնսդիր ժողովին հաստատել տալ Մարտի հալածման, հետապնդման օրէնքը: Նորից հարկ եղաւ նրան թագնւել սրտակից ընկերների մօտ և դադարեցնել լրագրի հրատարակութիւնը:

Յուլիսին միայն վերսկսւեց «Ժողովուրդի Բարեկամը»: Հետո առաջին իսկ համարներում Մարատը աշխատեց բացատրել, թէ որմնը են հակայեղափոխութեան յաղթութեան պատճառները: Նա գրում էր.

«Ենթափոխութիւնը շրջել է ժողովրդի դէմ և նրա համար մեծ դժբաղութիւն է դարձել: Սկզբից ևեթ նա հաստատուն հիսք դարձաւ ժողովրդի դէմ կատարւող դաւադրութիւնների և կաշառութերի: Նոյնիսկ օրէնսդիրներին (ներկայացուցիչներին) հնարաւորութիւն տևեց զանազան գործերի օպէրացիաներով, խարերայութեամբ և սրբիկայութեամբ զբաղւելու: Եւ այժմ նա պէտք է ծառայի հարուստներին և սպեկուլիաններին, որպէսզի վերջիններս հասնեն անսահման օգուտների և մենափաճառութեան, ծայր աստիճանի բարձրացնեն կեանքի միջոցների գները, անսամօթ թալանի սիստէմով քայքայեն ժողովրդին և ստորին պասակարգին և թշւառութեան գիրկը մատնելով՝ ստիպեն նրանց վաճառքի հանւել:

«Պետական բեմի վրայ փոխւել է միայն գեկօրացիան: Դեռսաները, գրիմները, քսութիւնները, վարչութեան գաղափարը»:

Ները մնացել են նոյնը: Ոչինչ, քաղաքական մեխանիզմի ընթացքի մէջ վճռականապէս ոչինչ չի փոխւել: Եւ այդպէս կըլինի այնքան ժամանակ, մինչեւ որ ժողովուրդ չուսաւորւի, մինչեւ որ նա վերջ չդինի այն խարերաների խաղերին, որոնք առաջնորդում են նրան, մինչեւ որ նա իր մէջ չգտնի հարկաւոր վճռողականութիւն, պատժելու այն սրիկաներին, որոնք յիմարացնում են իրան:

Հարց տալով թէ ինչպէս կարող էր պատահել այնպէս, որ ժողովուրդը խաբէր, Մարատը պատասխանում է:

«Պէտքէյը, այսինքն ժողովրդի ցածր դասակարգերը, բարձր դասակարգերի հետ մղած կուռում կարող է յօյս դնել միայն ինքն իր վրայ: Ապստամբութեան բայցին չնորհիւ իր մասսայի նա է տալիս ամեն ինչ, բայց այդ անում է նրա, համար որպէսզի վերջ ի վերջոյ յաղթւած դուրս գայ: Զէ որ այդ դասակարգերը չունեն հեռատեսութիւն, հմտութիւն, հարստութիւն, սպառազինութիւն, առաջնորդներ, չունեն գործունչութեան ծրագրիւ:

«Այդպէս էր նաև ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ: Ճիշտ չէ. իբր թէ ամբողջ ազգը ապստամբեց բռնակալի դէմ: Բոնակալութեան հիմք և պաշտպան մնացին ազնւականութիւնը, հոգեորականութիւնը, փաստաբանների դասը, բանկիրները, կապիտալիստները, գիտունները և գրականագէտները: Եւ եթէ, մի քանի կրթւած, հարուստ, բայց խորամանկ անձնաւորութիւններ հարուստ դասակարգերից սկզբում բռնակալների դէմ էին գուրս գալիս, ապա այդ երկար չի տեսում, նրանք իսկոյն եեթ, հետո որ ժողովրդի հաւատու ձեռք բերին, նրա դէմ դուրս եկան և շահագործեցին նրա ուժերը, որպէսզի իրանք բռնեն իրենց ձեռքով խորտակած արտօնեալ դասերի տեղը:

«Եղափոխութիւնը կատարեցին հասարակութեան միայն ցածր դասակարգերը, —բանտորները, արհեստաւորները, մանր վաճառականները, գիւղացիները, մի խօսքով ցածր դասը, այն չքաւորութիւնը, որին հարուստները անւանում էին ամբոխ: Բայց ինչ էլ որ լինի, մի բան ճիշտ է, որ այդ մասսան յեղափոխութիւն առաջացրեց միայն յօդուտ մանր հողատէրերի, խաքերաների և փաստաբանների»:

Ինչպէս այստեղ, նոյնպէս և շատ ուրիշ դէպքերում Մարատը զարմանալի ճիշտ է մօտենում այն հասարակական դա-

սակարգերի կուի ըմբռնմտնը, որը բերեց հասցրեց Փրանսիական յեղափոխութեանը և որոշեց նրա զարգացումը։ Այդ մտքով նրան կարելի է համարել Մարքոի և Էնդէլահի նախորդներից մէկը։ Բայց նրա պարզ և յստակ մտքերը շփոթւում են մէջանական դատողութիւնների հետ և նսեմացնում նրա մտաւոր կարողութիւնները։ Ֆրանսիական յեղափոխութիւնը չտեսնած պարզութեամբ երեան հանեց հասարակական ոյժի բաղխումը, բայց իրենք հասարակական գասակարգերը գեռ չէին հասել այնպիսի պարզ ու ճիշտ հասկացողութիւնների, ինչպիսիններին հասան յետագայում։

Մարատը չկարողացաւ տալ գասակարգային կուի այն վառ ու ցայտուն պատկերացումը, ինչ տւեցին Էնդէլան ու ու Մարքու, հէնց այն պատճառով, որ նա Մարքոի և Էնդէլաից պւելի քան կէս դար առաջ էր գրում։

Մարատի ժամանակակիցները առաջին հերթին կանգ էին տոնում միայն Փրանսիական հասարակութեան դասային մ.ծ բաժանումների վրայ. — առաջին դասը՝ ազնւականութիւնն էր, երկրորդը՝ հոգեորականութիւնը և վերջապէս երրորդ դասը, որը նրանց համարումով ընդդրկում էր մասցած ամբողջ ժողովուրդը, գիւղացիութիւնը, խոչոր առևտրականները, արհեստաւորներն ու բանկիրները, վարձու բանուրները և նրանց տէրերն էին։ Մարատը զարմանալի հոտառութեամբ նկատեց, որ «երրորդ դասը» իրենից չի ներկայացնում մի միատարր ամբողջութիւն, այլ կազմւած է տարբեր շահեր ունեցող զանազան դասակարգերից։

1792 թ. ամառը նա գրում էր. «Ֆրանսիայում, ինչպէս նաև միւս բոլոր միապետութիւններում (աւելի ճիշտ կլինէր, եթէ անւէր, ինչպէս նաև միւս պետութիւններում) քաղաքացիները բաժանած են տարբեր շահեր ունեցող մի քանի դասակարգերի և կարօղ է պատահել, որ այդ դասակարգերը տարբերում են միմիանցից ոչ միայն իրենց դրութեան և սեփականութեան անհաւասարութեամբ, այլև իրենց կրթութեամբ, հակումներով, սովորութիւններով և իրանց կեանքի ամբողջ ձևով։

Ես ասում եմ ազնւականութեան, հոգեորականութեան, չինովակութեան, Փինանսիստների, սւենոր քաղաքացիների, և չքաւրութեան, ուրիշ խօսքով, մի կողմից տիրող տարբից

միւս կողմից հարստահարւողների մասին։ Դրանք տարբեր դասկարգեր են, որոնք միահաւասար հպատակւել են միենոյն ինքնակալ թագաւորին, բայց միշտ միմիանց թշնամարար են վերաբերելու Արտօնիալ դասիրը ժողովրդի վրայ այնպէս են նայել, որ կարծես թէ նա գոյութիւն ունի միայն նրա համար, որ քերթեն նրա կաշին, ստրկացնեն և ստիպեն հպատակւել իսկ ժողովուրդը մտածում էր միայն հարուստ խաւերի ստացւածքի բաժանման մասին։

Վերջին տողերը պէտք է բացատրել այնպէս, որ այն ժամանակ չկար գեռ ևս այնպիսի բանուր դասակարգ, ինչպիսին այժմ կայ, որը ձգտում է ոչ թէ արտադրած մթերքների բաժանմանը, այլ ամբողջ արտադրութեան այնպիսի մի հասարակական կազմակերպութեան, որը կը ծառայէր ամբողջ հասարակութեանը, և ոչ թէ համատութիւնները կը կենարոնացնէր առանձին անհատների ձեռքում։

«Զայրոյթը — շարունակում է Մարատը, — ինքնակալութեան օրերին իշխաղ զեղծումների դէմ, յեղափոխութեան սկզբին հին կարգի դէմ ընդհանուր պայքարի մէջ համախմբեց երրորդ դասի բոլոր դասակարգերին, բայց նորից երեան եկան և յաղթանակեցին հակադիր շահերը։

«Ագանութիւնը և ընչասիրութիւնը քաղաքացիներին նորից բաժանուցին տարբեր կուսակցութիւնների, մինչդեռ առաջ սեփական բարիքի, ընդհանուր վտանգի և հոգատարութեան պատճառվ նրանք միացել էին ընդհանուր թշնամու դէմ։ Բայց հէնց որ նրանք ապահովեցին իրենց ստացւածքույն և անձնական կեանքը, լիւրյուն — Բաստիլիայի առումից յետոյ, նորից իրենց ստոր կրքերի զոհը դարձան։ Երբ նկարիչները, որբացած արհեստաւորները, առևտրականները, սպիկուլիանուները նկատեցին, որ յեղափոխութիւնը կրճատեց նրանց օգուտները, նրանք ցանկացան, որ կը կին վերադառնայ պալատական տղրուկների, բախտախինդիրների և վատնիչների թագաւորութիւնը, և շուտով ուկու ազանութիւնը նրանց հասցրեց այնպիսի դրութեան, որ նրանք սկսեցին ծառայել իրենց սախկին տէրերի գործին։

Արքունիքն ու պալատականները բոլորովին բացառիկ նշանակութիւն ունեին։ Փարիզի արդիւնաբերութեան և առևտրի համար։ Նախ քան յեղափոխութիւնը, կարող էր թալ, թէ

ամբողջ Փարիզը, նրա ամբողջ արդիւնաբերութիւնը և առևտուրը գոյութիւն ունեն միայն թագաւորով և թագաւորի համար: Այդ բանն է որ ընդգծում է Մարատը վերը բերած տողերում:

«Յետադարձ ակնարկ ձգելով և յիշելով յեղափոխութեան առաջին շրջանի առաջ քաշած մարդկանց, Մարատը տիսուր եղակացութեան է յանգում: Այդ մարդկանցից և ոչ մէկը, որոնց առաջ այնպէս զլուխ էր խոնարհում բուրժուադիան, իսկապէս չէր սիրում ազատութիւնը: Նրանք բոլորն էլ,—բացառութեամբ անվախ ու քաջ մի քանի ուժեղ բնաւորութեան տէր մարդկանց, որոնք երբ խօսքը չարիքի մասին է պատրաստ են զոհելու մարդկութեան համար,—հարստութիւնը, շքանշանները, բարձր աստիճաններն ու արքապետութեան ազանութիւնը կզերազաւաէին ազատութիւնից, բոլորն էլ վախկուներ են, դատարկ ծառայողներ, թոյլ, ագահ եսասէրներ, առանց էնէրգիայի ու բարեսրտութեան թուրամօրթ հոգիներ, ազգ լինելու համար անարժանի, բաւականին ցածողի որպէսզի ծախւեն ուրիշին, և այնքան վախկոտ, որ միայն վսխկուութեան պատճառով նրանք իրենց համաքաղաքացիներին ճնշելուց կհրաժարւեն»:

«Փողովուրդի Բարեկամի» մէջ 1792 թ. յուլիսի 14-ին Մարատը ասում է, որ ֆրանսիական յեղափոխութիւնը ներկայացնում էր իրանից կատարեալ կօմէգիա, որը ընդհատում էր միայն մի քանի տրագիկ պատկերներով: «Առաջին չորս ամիսը Բաստիլիայի վերցնելուց յետոյ, մենք տեսնում էինք քաղաքացիների գնդեր, որոնք պարծենալով իրանց զգեստով և իր կապիկներ աշխատելով նմանւել իսկական զօրքի, ամեն օր զօրահանդէս էին կազմակերպում, որպէսզի կրկին և կրկին անգամ փառաբանւեն»:

«Յայց ամենաայլանդակ պարագները տեղի էին ունենում Աղջային Փողովում: Ահա արդէն երիք տարի է, որ մենք այնտեղ տիսում ենք բազմաթիւ ներկայացուցիչներ, թագաւորութեան արքեր մասներից ուղարկւած, որոնք եկել են շնորհակալութիւն յայտնելու Փողովի անմահ ծառայութիւնների համար, այն իմաստուն որոշումների, որոնցով նա սահմանադրութեան ճանաչած օրէնքների հիման վրայ քանդում է երկիրը, ազատութեան քաղցր պարգևների համար՝ որոնց իսկապէս ոչ ոք չի ճաշակել»:

պետութեան բարգաւաճման համար, որը իսկապէս խռովութիւնների, թշանութեան, քաղցի և անարխիայի զոհ է դարձել»:

Նորից ընդհատեց «Փողովուրդի Բարեկամի» հրատարակութիւնը, 1792 թ. օգոստոսի 11-ին լոյս տեսաւ միայն մի թռուցիկ, որը Փարիզի փողոցների պատերին կպցրւեց: Մարատը ասում էր, որ արդէն ժամանակ է ժողովրդին հրաժարւել քաղաքային վարչութեան և Աղջային Փողովի փառած անգամներից, այլ կերպ կոկուի արիւնալի հալածանքների շարանը: «Վախեցէք ուսակցիայից, ձեր թշնամիները ձեզ չեն խղճայ, եթէ նրանք հասկանան, որ իրենց ժամը հասել է: Ուրիմն անողոք եղէք. դուք ընդմիշտ կորած էք եթէ չշտապէք ցրել քաղաքային վարչութեան և գեմստօնների (գէպարտամէնների) հակայեղափոխական անգամներին, բոլոր դատաւորներին, որոնք ժողովրդի դէմ են գնում, և վերջապէս արդէն քայլայւած Աղջային Փողովի ներկայացուցիչներին»:

Շատ շուտով Մարատը քաղաքային գումայի, իսկ յետոյ նաև Կօնւէնտի անդամ ընտրւեց (նոր Օրէնսդիր Փողով, միայն թէ. հակառակ՝ նախկինի լայն լիազօրաւթիւններով):

## VII

Յետագայում Մարատը կարողանում էր լրագրին նւիրել միայն այնքան ժամեր, որքան մնում էին քաղաքական գործունէութիւնից յետոյ:

Եակօրինները՝ այն բարիկալ կուսակցութիւնը, որին յարում էր նաև Մարատը, համակրանք էին զանում գլխաւորապէս Փարիզում: Յեղափոխութիւնը այստեղից դուրս էր արել աղնականներին, արթունական լակէյններին, թագաւորական բանկիրներին. վանդել էր ամբողջ հազարներ այն պարագիտների, որոնք կերակրում էին թագաւորական անից, Քաղաքի թշառների, Փարիզի արւարձանների մանուֆակտուրային բանտորների, մանր արհեստաւորների, առանձնապէս աշակերտների համեմատական նշանակութիւնը ուժեղացել էր:

Իրենց տնտեսական զարգացմամբ ֆրանսիական մի քանի քաղաքներ Փարիզից բարձր էին կանգնած: Այդ քաղաքներում աղնականութիւնը երբէք այն գերը չէր խաղում, ինչ որ Փա-

բիզում: Ամենաաղղեցիկ տարրը նախ քան յեղափոխութիւնը և յեղափոխութիւնից յետոյ այստեղ առևարական և նոր ծնող արդիւնաբերական բուրժուազիան էր: Այդպէս էր ի միջի այլոց ժիշոնդա (Լուարա) գետի ափին գտնուղ քաղաքներում: Այդ քաղաքների աղղեցիկ բուրժուազիան իր շահերի պաշտպաններին գտաւ գլխաւորապէս փաստարանների շրջանում: Կօնւէնտում նրանք, իրենց ուրիշ շրջաններից եկած քաղաքական համախոնների հետ միասին, կազմեցին այսպէս կոչւած ժիշոնդիստական կուսակցութիւնը:

Բուրժուազիայի համար յեղափոխութիւնը վաղուց արդէն շատ հեռու էր գնացել: Փարիզի «ամրոխի»—այսինքն չքաւորութեան ցոյցերը, ամբոխի, որը գորոնվ վերցրեց Բաստիլիան, որը շարունակ ճնշում էր գործ գոտու Օրէնսդիր Ժողովի վրայ, վաղուց արդէն անհանգստացնում էին նրան: Ժողովուրդը կատարեց իր գործը, ժողովուրդը հարած հասցրեց հին կառավարութեանը, ժողովուրդը նոր մինիստրների համար տեղ մաքրեց, դէսի որոնց բուրժուազիան տաձում էր անսահման հաւատ, որովհետեւ դրանք նրա մինիստրներն էին: Ինչու ժողովուրդը չի վերացանում իր նախկին կեանքին, ինչու նա շարունակում է խառնւիլ քաղաքականութեան մէջ: Մթթէ երկիրը չի ընտրել իր օրէնսդիրներին, մթթէ նա նրանց ձեռքը չի տւիլ իր ամբողջ բախտը: Ինչու է խլրում այդ ամրոխը, որը քաղաքական մտքով այնքան անկիրթ ու տհաս է, մթթէ նրան չեն տել ընտրողական իրաւունք:

Պէտք է վերջ տալ դրան, պէտք է վերջ տալ այդ մշտական քաղաքական խոռովութիւններին—սրոշեց բուրժուազիան: Եւ հասկանալի է, գործին տւեց այնպիսի տեսք, որ իրը թէ նա պաշտպանում է ամբողջ ֆրանսիական ժողովրդի իրաւունքները՝ փարիզեան «ամրոխի» յարձակումներից:

Փարիզը ապօրինի կերպով է այդպիսի վճռող աղղեցութիւն գործում քաղաքականութեան վրայ: Փարիզը մէկն է միայն Ֆրանսիայի ութսուն և երեք դէսարտամէնտներից (նահանգներից): Այդ նահանգները չպէտք է հպատակութեամբ կատարեն այն, ինչ որ կհրամայի Փարիզը: Իսկ որովհետեւ յոյս չկար կօնւէնտը և ընդհանուր պետական կառավարութիւը Փարիզի աղղեցութիւնից ազատելու, հարկ եղաւ դիմելու հետեւալ միջոցին: ընդհանուր պետական իշխանութեան իրաւունքները պէտք է առն

մանափակել և այնպէս անել, որ գործերի մեծ մասը, որ որոշում է Փարիզում, որոշեն տեղում—նահանգներում: Արդէն 1792 թ. յունիսին էն նահանգներից (գէպարտամէնտից) Օրէնսդիր ժողովին ուղարկւած մէկ դիմումի մէջ առում էր. «Փարիզի ձայնը, դա մէկ ութսուներեք-երրորդական մասն է ամբողջ ֆրանսիայի»: Եւ կօնւէնտի բացման չորրորդ օրը ժիշոնդիստ կառուը արտասանեց նշանաւոր խօսքեր, իր համախոնների ծափահարութեան հեղեղի տակ: «Ես չեմ ուզում, որ Փարիզը, որը զեկավարում է ինտրիգաններով, գառնայ ֆրանսիայի համար այն, ինչ որ Հռոմն էր հռոմէական կայսրութեան համար: Փարիզի նշանակութիւնը անհրաժեշտ է հասցնել մինչև մէկ ութսուներեք-երրորդ մասն՝ աղղեցութեան այն չափի, որով օգտում է իւրաքանչիւր ուրիշ գէպարտամէնտ:

Սրանք էին առևտրական, արգիւնաբերական բուրժուազիայի, ժիշոնդիստների և նրա ներկայացուցիչների հայեցքները: Այլ կերպ էին նայում գործին Փարիզի յեղափոխականները: Փարիզը նրանց համար յեղափոխական Ֆրանսիայի սիրտն էր: Յանուն յեղափոխութեան, յանուն ժողովրդի պէտք է ոչ թէ նուազեցնել նրա աղղեցութիւնը: Իսկապէս, մի Բաստիլիայի հետ միասին խորտակեց էին, միահեծան-ազնւական իրաւուկարգը: Ո՞վ փախչող թագաւորին վերադրեց Փարիզ, ով երևան հանեց և վերջ դրաւ նրա իրադախութեանը: Ո՞վ կրկին անզամ փրկեց Ֆրանսիան նոր դաւադրութիւնից և ոչնչացրեց գաւազիրներին: Այդ բոլորը արեց Փարիզի ժողովուրդը: Նա է յեղափոխութեան դեկավարը և պէտք է մայ զեկավար:

Դա յեղափոխութեան և հակայեղափոխութեան միջև աեղի ունեցող կարևոր էր: Ժողովրդի, որը թէն ինքն էր առաջացրել յեղափոխութիւնը բայց ոչինչ չէր սաացել, ու բուրժուազիայի միջև, որը արգէն յաջողեցրել էր ժողովրդի մաքրած հին կատագրիչների տեղը նշանակել իր մարդկանց:

Դա կախւ էր եակօրինների և ժիշոնդիստների միջև ժիշոնդիստները պարտեցին և նրանցից շատերը կորան գիշօտինի տակ: Բուրժուազիան պատմագիրների ամբողջ համակրութիւնը, ի հարկէ, ժիշոնդիստների կողմն էր: Եակօրինները նրանց համար դաժան հրէշներ են, որոնք սառնախրտ կերպով թափում էին իրենց հակառակորդների արիւնը միմիայն նրա հա-

մար, որպէսզի իրենց քաղաքական իշխանութեան փառասէր ձգտութիւների բոլոր արդելքները վերացնեն:

Մարատը առանց որևէ տատանման յեղափոխութեան և Փարիզի յեղափոխական չքաւորութեան կողմն անցաւ: Հէնց միայն այդ քաւական էր, որպէսզի արժանանար բուրժուական պատմագէտների ատելութեանը:

Փարիզի չքաւորութեան դրութիւնը անելանելի էր: Թըղթադրամների անդադար բաց թողնելու հետ միասին, անհրաժեշտ մթերքների գները կատաղի արագութեամբ բարձրանում էին: Ժիրօնդիստները, որոնք պաշտպանում էին կապիտալիստների շահերը, դէմ էին գնում բոլոր միջոցներին, որոնք կարող էին գների աճեցումը կանգնեցնել: Նրանք չէին ցանկանում, որ հարուստ մարդը այնքան շատ հարկ վճարի, որքան շատ հարուստ է (պրօգրէսի հարկ): Նրանք չէին ցանկանում, որ ապրուստի բոլոր անհրաժեշտ ապրանքները, ծախւէին խիստ որոշւած սակագնով (տակսա): Նրանք չէին համաձայնում, որ քաղաքային վարչութիւնը նշանակի ստիպողական փոխառութիւն այնպիսին, որի ժամանակ ամեն մարդ կտայ ոչ այնքան, որքան կցանկանայ, այլ այնպիսին, որ միլիոնատէրը պէտք է պետութեանը կամ քաղաքին պարտք տայ մի քանի անդամ աւելի շատ, քան մէկ ուրիշը հազար ուրելու կարողութեամբ: Ժիրօնդիստները չէին ցանկանում, որպէսզի այդպիսի միջոցներով քաղցող քաղաքացիների համար միջոցներ հայթայթէր: Նրանք առհասարակ չէին ուզում, որպէսզի հարուստ մարդիկ իրենց հարստութիւնից հրաժարւէին թշւառների օգտին:

Առանց այն էլ չքաւականացող հացի ներմուծումը Փարիզ երբեմ դադարում էր: 1792 թ. գեկտեմբերին արդէն գները հասան չտեսնած բարձրութեան, իսկ յաջորդող շաբաթներում հասաւ աներեակայելի չափերի, և նոյնիսկ այդպիսի գներով էլ ոչինչ չէր կարելի հարել:

Անա այստեղ էր, որ պէտք է բռնկւէր կատաղի կոիւ Մարատի և Ժիրօնդիստների միջև: Մարատը պահանջում էր շուտափոյթ և անյետաձգելի միջոցներ, որպէսզի Փարիզի ժողովրդին մատակարարւի պարէն և կանգնեցւի գների աճեցումը:

Նա ամեն անգամ չէր կարողանում ըմբռնել թանգութեան իսկական պատճառները: Նա չէր նկատում օրինակ, որ պատերազմը, որն արդէն սկսւել էր, պահանջում էր անչափ և անօգուտ ծախսեր: Իսկ եթէ այդ ծախսները ծածկում էին նոր և նոր թզթաղբաններ տպւելով՝ կեանքի թանգանալը անխուսափելի էր: Նա չէր հասկանում նոյնպէս, որ անարդարութիւն կլինէր թանգութեան մեղքը: Ճգել մանր խանութպանների և հացթուլխների վրայ, որոնք յաճախ իրենք էլ էին սոսկալի կերպով տանջւում ընդհանուր քայքայումից: Նա դժւարութեամբ միայն կարողանում էր ցոյց տալ թշւառութեան ընդհանուր և հիմնական պատճառները, և կանգ էր առնում երկրորդական և անուղղակի պատճառների վրայ: Բայց այստեղ նա շատ բան հասկանում և ըսրունում էր ճիշտ, և շատ միջոցներ, որոնց գործադրութիւնը նա պահանջում էր քաղաքից և պետութիւնից, քաղաքի թշւառութեանը ճիշտ որ օգուտ կրերէին:

1793 թ. փետրւարի 25-ին Մարատը գրում էր. «Անվիճելի է, որ կապիտալիստները, մենավաճառները և մակլէրները, շուայլութեան առարկաների վաճառողները, բանսարկուների խմբակը, չինովնիկները և նախկին ազնւականները, նրանք բոլորն էլ համարեա հին կարդի պաշտպաններն են... Որովհետեւ ես ոչ մի միջոց չեմ գտնում նրանց մտածողութիւնը փոխելու, ուստի ես չեմ ճանաչում պետութեան հանգստութիւնը ապահովելու ուրիշ միջոց, քան այդ անիծեալ դաւադիրների խսպառ ոչնչացումը: Այժմ նրանք կրկնապատկում են իրենց ոյժերը, որպէսզի ամենածայրայել միջոցների գնով ժողովուրդը գցեն թշւառութեան և սովոր գիրկը:

«Տանջւած մշտական թափառութիւնից, ազգը դեռ ևս չի ձեռնարկում ազատ երկիրը մաքրելու այդ չարագործների ցեղից և ազգի կենսունակ ներկայացուցիչները ուղղակի խրախուսում են նման յանցանքներ, թողնելով նրանց անպատիմ:

Այդպիսի դէպում մնում է միայն զարմանալ, թէ ի՞նչպէս է որ իրաքանչիւր քաղաքի յուսահատած ժողովուրդը, ինքը իր սեփական ձեռքը չի վերցնում իր իրաւունքը: Ժամանակ չէ վերջապէս ժողովրդի ներկայացուցիչներին անել՝ մի քիչ աւելի բան և ոչ թէ տրւել ժողովրդի դժւար դրութեան մասին տեղի

ունեցող դատարկախօսութեամբ չձեռնակելով գրութիւնը բարելաւելու և ոչ մի միջոց:

Օժանդակութեան օրէնսդրական միջոցները անօգուտ են. Մենք տեսել ենք միշտ, որ նրանք ոչ մի հետևանքի չեն հասցնում: Օգնութիւն կհասցնեն միայն յեղափոխական միջոցները: Ես չգիտեմ ուրիշ ոչ մի միջոց յարմարւելիք մեր իշխութեանը քան հետևեալը. անհրաժեշտ է գործի քննութիւնը յանձնել հայրենասէրներից կազմւած հասարակական ապահովութեան կօմիտէին: Թող նա խոշորագոյն հացի սպէկուլիանաներին հին քաղաքացիներին դատի կանչի, և թող նա մեղադրի նրանց այդ դատարանի առաջ դաւաճանութեան մէջ:

Ես ունեմ ի միջի այլոց մի միջոց ևս, որը նպատակին կհասցնէր. թող ունեոր քաղաքացիները միանան, արտասահմանում գնեն անհրաժեշտ պարէն, բերեն մրանսիս ու ծախեն իրենց արժեքի գնով և այդպիսով ազգեն գների անկմանը մինչև սովորական աստիճանը: Բայց այդ ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ են բարեգործներ, ինչիսիները մեր երկրում, —ուր թագաւորում են խարեւաները և որտեղ միաքը հանդէս է գալիք միայն այն ժամանակ, երբ պէտք է խաբել միամիտներին և կեզեքել ժողովուրդին—չէք գտնի:

Այդ դատողութիւնները ցոյց են տալիս Մարատի անզօրութիւնը տնտեսական հարցերում: Նա չէր կարողանում թափանցիլ տնտեսական քայլայման պատճառների խորութիւնը, ուստի և յաճախ տռաջարկում էր այնպիսի միջոցներ, որոնք աւելի ևս կմեծացնէին քայլայումը: Նա չէր ըմբռնում լայն հասարակական կազերը, և այնտեղ, որտեղ որ պէտք էր պարզաբանել պատճառները նա փնտրում էր յանցաւորներին: Մարատը քաղաքագէտ էր, բայց ոչ տնտեսագէտ:

Բայց և այնպէս Մարատը զարմանալի նրբութեամբ արտայտում էր Փոքրիզի լայն շքաւորութեան տրամադրութիւնները: Հէնց նոր մեր առաջ բերած յօդւածը տպւել է 1793 թ. փետրվարի 25-ի համարում:

Բայց մի քիչ տասաջ, նախ քան լրագիրը կհանէին տպարանից, անծայր հերթերում կանգնելուց տանջւած քաղաքացիները պկսեցին յարձակել իտութների վրայ և կողոպտել:

Անկանկած, Մարատի յօդւածը—պարենաւորման հարցը

չլուծող—աւելի շուտ պարենաւորման գործը քայլայող ճանապարհն էր ցոյց տալիս: Բայց և այնպէս կողոպուտների յանցաւորը Մարատը չէր. նրանք սկսւեցին և վերջացան մի քանի ժամ աւելի առաջ քան նրա յօդւած հասաւ ընթերցողներին: Քաղցը և յուսահատութիւնը, ահա թէ որոնք էին թալանի՝ պատճառները:

Բայց և այնպէս ժիրօնդիստները կարողացան Մարատին պատասխանաւութեան կանչել կողոպուտի համար: Գործը վերջացաւ Մարատի լիովին յաղթութեամբ:

Ուրիշ անգամ ևս ժիրօնդիստներին յաջողւեց այլ յօդւածների, և արիւնահեղութեան և սպանութեան գրգելու համար Մարատին պատասխանաւութեան կանչել: 1793 թ. ապրիլի 24-ին նա կանգնեց յեղափոխական դատարանի առջև: Դատարանը արդարացրեց Մարատին և հասարակութիւնը նրան իր ուսերի վրայ բարձրացրեց և հանդիսաւոր կերպով շընչըրեց ամբոխով լի փողոցներում:

Մարատի այդ յաղթութիւնը Փարիզի հարուստ բուրժուազիային հասցրեց աննկարագրելի կատաղութեան: Ժիրօնդիստական լրագիրները ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում նրա զէմ մզած կուռում: Նրանք չէին բաւականանում նրանով, որ Մարատին ներկայացնում էին աւազակային խմբի ղեկավար: Նրանք իրենց ընթերցողներին հաւատացնում էին, որ «ժողովուրդի Բարեկամը» հրատարակում է օտարազգիների փողով և որ ինքը Մարատը օտարեկրեայ պետութեան լրտես է և ցանում է Ֆրանսիայում անհամաձայնութեան սերմեր, նրան թուլացնելու նպատակով:

1793 թ. մայիսին բուրժուական պատանիները, բանկիրների, մեծ պահեստների վաճառականների, նրանցից կախում ունեցող ծառայողների և հարուստ ուսանողների հետ միասին Փարիզում կազմակերպեցին բազմաթիւ միախնդներ, որտեղ զիստը և միակ քննութեան առարկան Մարատն էր և նրա գործունէութիւնը: Այդ պարոնները, այդ կեանքի վայելողները, այդ անգործ կամ այսպէս ասած ռուկէ պատանիները, այդ փարիզեան Փրանսները և պճնամոլները, որ փոխարինում էին ազնւականութեան պատանիներին, աւելի անամօթարար էին վարւում ճշմարտութեան նկատմամբ, քան ժիրօնդիստական կուսակցու-

թեան լրագիրները: «Աւազակախմբի առաջնորդ, արտասահմանի լրտես, գաւաճան...»: Փողովսերը վերջացան «գէպի գիյօտին Մարտին» բացականչութիւններով:

«Ոսկէ պատանիների» ջարդի կանչող ագիտացիան իր հետեանքներն ունեցաւ Մայիսի 10-ին այդ պատոնների խուժանը յարձակւեց Մարտի վրայ, երբ նա վերադառնում էր կուսակցական ժողովներից մէկից, և ծածկեց նրան բռունցքների և փայտերի հարւածներով, մինչև որ չհասան Մարտի բարեկամները և չցրեցին նրանց:

«Ոսկէ պատանիների» ջարդի կանչող ագիտացիան պսակւեց կատարեալ յաղթութեամբ: Յուլիսի 13-ին 1793 թ. ժիրօնդիստական կուսակցութեան հետ մօտիկ կանգնեց ունեցող Շարլոտա Կորդէն դաշոյնի հարւածներով սպանեց Մարտին, Թըշւառը կարծում էր, թէ փրկում է Ֆրանսիային կատաղի թշնամուց:



